ՀՆԱԳՈՒՅՆ ԱԶԳԵՐԻ ՀԵՐՈՍԱԿԱՆ ԷՋԵՐԸ

ՄԱԿԴԻՐ ԵՎ ՓՈԽԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ

Մակդիրը լեզվի պատկերավորման միջոցներից է: Գեղարվեստական խոսքում առարկան, երևույթը կամ գործողությունը պատկերավոր ներկայացնելու նպատակով հեղինակները հաճախ են փոխաբերական իմաստով գործածում առարկայի հատկանիշ արտահայտող բառեր և կապակցություններ: Պետք է կարողանալ իրարից տարբերել ոչ փոխաբերական հատկանիշը (որոշիչը) և մակդիրը. առաջինը ցույց է տալիս առարկայի էությունից բխող ուղղակի հատկանիշ, երկրորդը՝ փոխաբերորեն և հուզականորեն է բնութագրում առարկան, ինչպես՝ սպիտակ ամպ–փափուկ ամպ, զուլալ աղբյուր–զանգակ աղբյուր, վարար անձրև–արծաթ անձրև:

Մակդիրը կարող է արտահայտչորեն բնութագրել նաև գործողությունը, ինչպես՝ Գետը հոսում է երակ առ երակ: Մակդիրը խոսքը դարձնում է պատկերավոր: Մակդիրները նկարագրական խոսքի (բնանկար, դիմանկար) կարևոր միջոցներ են:

Փոխաբերությունը գեղարվեստական պատկերավորման միջոց է: Փոխաբերության մեջ մի երևույթը կամ առարկան գործածվում է մեկ այլ առարկայի կամ երևույթի փոխարեն՝ հիմնված դրանց նմանության կամ համեմատելի լինելու վրա: Օրինակ՝ Հ. Սահյանի «Քարափը» բանաստեղծության հետևյալ տողերը պետք է հասկանալ ոչ թե ուղղակի, այլ փոխաբերական իմաստով. **«Ծանր նստել է քարափը ձորում՝ // Հյուրընկալ տերը մանկության ձորի: // Ճակատից քարե քրտինք է ծորում, Ուսից կախվում են մամուռ ու մորի...»:**

Փոխաբերությունը նման է համեմատությանը, սակայն նույնը չէ: Համեմատության մեջ առկա են համեմատվող առարկան և այն առարկան, որի հետ կատարվում է համեմատությունը: Փոխաբերության դեպքում նկարագրվող երևույթի անունը պարզապես փոխարինվում է մի ուրիշ առարկայի անվամբ: Օրինակ՝ «Մայրս» բա-

նաստեղծության մեջ Հ. Շիրազը փոխաբերական հրաշալի պատկերներով ընդգծում և հաստատում է մարդու կյանքում մոր անփոխարինելի լինելու գաղափարը. **«Մեր հույսի դուռն է մայրս, Մեր տան մատուռն է մայրս, Մեր օրորոցն է մայրս, Մեր տան ամրոցն է մայրս...»:**

Առաջադրանքներ

1. Հետևյալ բառերին մակդիրներ ավելացրու.

ա) սիրտ, բ) բախտ, գ) ամպրոպ, դ) աշխարհ, ե) ձոր:

2. Ձմեռը բնորոշող մակդրային կապակցություններ գրիր:

3. Տեքստից դուրս գրիր մեկ մակդրային կապակցություն, այն դարձրու վերնագիր և վերնագրին համապատասխան կապակցված խոսք կառուցիր:

4. Ընդգծիր մակդրային կապակցությունները:

Եվ քամին բերում էր անտառի այդ լիակուրծք խշշոցն ու մռունչը, ու թվում էր, թե հենց մեր դռան առջև է աղմկահույզ, հողմածեծ անտառը:

5. Դուրս գրիր փոխաբերական իմաստով գործածված բառակապակցությունները:

Նորից ձյունն է մարմանդ իջել,
Ճերմակ երազ փռել ճամփին,
Ցրտից ծառերն են կծկվել
Իմ Եղեգիս գետի ափին:

Գլխին դրած ճերմակ գլխարկ,
Ժայռն է կապել սառցե գոտի,
Ու սառույցի կալանքի տակ
Մեղմացել է երգը գետի...

6. Ընդգծիր այն բառակապակցությունները, որոնցում կա փոխաբերական իմաստով գործածված բառ:

Մեր լեզու՜ն... Մեր խիղճն է դա,
Սուրբ հացը մեր սեղանի,

Մեր հոգու կանչն է արդար
Ու համը մեր բերանի:
Մեր լեզուն ծուխն է մեր տան,
Մեր կշիռն աշխարհի մեջ:

(Հ. Սահյան)

7. Ընդգծի՛ր փոխաբերական իմաստով գործածված բայերը:

Քամին քարայր է մտել,
Փշաքաղվել է,
Քարայրի հոնքը ծռվել,
Աչքը շաղվել է:

(Հ. Սահյան)

8. Նման, պես, իբրև բառերով կազմի՛ր համեմատություններ:

9. Նկարագրի՛ր աշունը՝ գործածելով մակդիր, համեմատություն, փոխաբերություն: